ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/05

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

Մասնակից՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ռ. Մեհրաբյանի

«Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա.Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 13.01.2020թ.-ի թիվ 01/13.1/17-20 գրության հիման վրա, 16.01.2020թ.-ին «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 16.01.2020թ.-ին:

17.01.2020թ.-ին կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ, իսկ 22.01.2020թ.-ին և 27.01.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

ՀՀ կառավարության 23.01.2020թ.-ի թիվ 42-Ն որոշման համաձայն 2020 թվականի հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխվել է 2020 թվականի փետրվարի 1-ին:

Հիմք ընդունելով վերոնշյալ որոշումը, հաջորդ նիստը նշանակվել է 29.01.2020թ.-ին:

Գործի քննությունն ավարտվել է 29.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.02.2020թ.-ին:

2. <u>«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկականհամալսարան» հիմնադրամը 13.01.2020թ.-ի թիվ 01/13.1/17-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից 2019 թվականի նոյեմբերի 20-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով սննդամթերքի գնման ընթացակարգի շրջանակում առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել ՍՅ.ՌՈՒ.ՄԱ ՍՊԸ-ն և ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ն:

Հայտնում եմ, որ սահմանված ժամկետում առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցների՝ ՍՅ.ՌՈՒ.ՄԱ ՍՊԸ-ի և ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն 30.01.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված գրությամբ հայտնել է, որ *««Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ 29.01.2020թ-ին նշանակված նիստի մասին նախապես էլեկտրոնային փոստով ծանուցում չեմ ստացել: Նիստ դիտել եմ առցանց:*

Ի լրումն ցանկանում եմ ներկայացնել armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման արտապումները, որտեղ «բովանդակություն» բաժնում երևում է շտկման առաջարկությունը:

Ծանուցումը ներկայացվել է armeps համակարգի միջոցով հաշվի առնելով հրավերի 7.18 կետը «քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

Այն պնդումը, որ մասնակիցը տեղեկացված չի եղել, որ էլեկտրոնային փոստին է անհրաժեշտ ուղարկել հավելված 3.1-ի շտկված տարբերակը ապա ցանկանում եմ նշել, որ հրավերի 7.22 կետում հստակ նշված է, որ «Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով», որին Մասնակիցը առաջին ծանուցումը ստանալուց հետո 12.12.2019թ. ուղարկել է հավելված 3.1-ը:

Ձեզ եմ փոխանցում նաև մասնակից ուղարկած 2 էլեկտրոնային նամակները, որտեղ կցված են առաջին հավելված 3.1-ը և ուշացումով ներկայացված հավելված 3.1-ը (վերջինս չի քննարկվել քանի որ չի ներկայացվել ծանուցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում):»:

3. <u>«Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 29.01.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել են հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն և որոշ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին ծանուցվել է ներկայացնել հրավերով սահմանված երկրորդ փուլի փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 3.1-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3.1 հավելվածում՝

- առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում առկա է <<կամ համարժեք>> բառերը, 45-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը սյունակում գրված է կազմակերպության անուն, 38-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը, արտադրողի անվանումը, ապրանքային նշանը լրացված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝ առաջնորդվել հրավերի 7.18 կետով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նշված արձանագրությունը նույն օրը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է մասնակիցներին, սակայն առանձին ծանուցում «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ին չի ուղարկվել:

Այնուհետև «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն հեռախոսազանգով կապ է հաստատել Պատվիրատուի հետ՝ փորձելով հասկանալ, թե վերջինս երբ պետք է ուղարկի շտկման ծանուցումը, որով նաև կսահմանվի շտկված փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը: Վերոհիշյալին ի պատասխան՝ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է, որ որպես ծանուցում պետք է դիտարկել ուղարկված արձանագրությունը: Ստանալով նման

պատասխան՝ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն հենց նույն օրը, այն է՝ 24.12.2019թ., ուղարկել է շտկված փաստաթղթերը (արտատպումը կցվում է):

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը և որոշում է կայացվել մերժել ՍՊԸ-ի հայտը:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի Հրավերի 7.18-րդ կետի համաձայն՝ Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատաս խանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է՝

- *կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.*
- *ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:*

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, որ գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի 7.18 կետով վերջինիս ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխա-նությունները, իսկ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ին, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, հրավերով սահմանված կարգով և 3-օրյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնել արձանագրված անհամապատասխա-նությունները շտկված ապրանքի ամբողջա-կան նկարագիրը: Ընդ որում, վերոնշված արձանագրությունը www.gnumner.am համացան ցային կայքում անհասկանալի պայմաններում չի հրապարակվել, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից որևէ ծանուցում չի ուղարկվել /կցվում է/:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն այդպես էլ չի ստացել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկում կատարելու ծանուցումը, այլ փոխարենը ստացել է միայն թիվ 4 արձանագրությունը: Նշված արձանագրությունը նույն օրը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է մասնակիցներին, սակայն առանձին ծանուցում «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ին չի ուղարկվել: Այնուհետև «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն հեռախոսազանգով կապ է հաստատել Պատվիրատուի հետ՝ փորձելով հասկանալ, թե վերջինս երբ պետք է ուղարկի շտկման ծանուցումը, որով նաև կսահմանվի շտկված փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը և այլ պայմաններ: Վերոհիշյալին ի պատասխան՝ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է, որ որպես ծանուցում պետք է դիտարկել ուղարկված արձանագրությունը: Ստանալով նման պատասխան՝ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն հենց նույն օրը, այն է՝ 24.12.2019թ., ուղարկել է շտկված փաստաթղթերը: Սակայն գնահատող հանձնաժողովի 27.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանա-գրությամբ անտեսվել է «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտված փաստաթղթերը և որոշում է կայացվում մերժել ՍՊԸ-ի հայտը՝ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմնավորմամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ նորից, կասկածելի պայմաններում տեղեկագրում չի հրապարակվել նաև թիվ 5 արձանագրությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք քննարկել նաև գնահատող հանձնաժողովի կողմից 27.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու իրավաչափության հարցը, մասնավորապես թիվ 5 և թիվ 4 արձանագրությունները մինչ օրս չեն հրապարակվել տեղեկագրում, իսկ արդեն համաձայն թիվ 5 արձանագրության նշվել է, որ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատաս-խանությունը, մինչդեռ թիվ 4 արձանագրությունը՝ ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովը հստակ նշել է, որ առաջնորդվելով Հրավերի 7.18 կետով որոշում է կայացրել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին ...:

Իսկ ինչպես արդեն նշել ենք, Հրավերի 7.18 կետի համաձայն՝ .... առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը....

-ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Փաստացիորեն նշված փաստերը վկայում են, որ Ընկերությանը շտկման ծանուցում չի ուղարկվել: Այսինքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, որ այս պարագայում, երբ շտկման ծանուցում չի ուղարկել «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ին, արձանագրված անհամապատաս-խանությունները ֆիքսված թիվ 4 արձանագրությունը չհրապարակելով տեղեկագրում և, ավելին, չնշելով շտկված փաստաթղթեր ներկայացնելու վերջնաժամկետ և էլ. հասցե՝ թե շտկված փաստաթղթերը որ էլ. հասցեին պետք է ուղարկվի և հաշվի առնելով որ 24.12.2019թ. «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից քարտուղարի էլ.հասցեին է ուղարկվել շտկված փաստաթղթերը, դրանից հետո գնահատող հանձնաժողովը անտեսել է վերը թվարկված հանգամանքները և որոշում է կայացրել 27.12.2019թ. տեղի ունեցած և տեղեկագրում չհրապարակված թիվ 5 արձանագրությամբ մերժել ՍՊԸ-ի հայտը՝ առնվազն համարում ենք ոչ իրավաչափ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթներում արդեն իսկ քննվել են նույնաբովանդակ գործեր՝ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14, ՍՅ-ԼՕ-2019/221, թիվ ՍՅ-ԼՕ-2019/220 և այլն:

Օրինակ, 12.12.2019թ. կայացրած թիվ ՍՅ-ԼՕ-2019/220 որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը արձանագրել է հետևյալը. «Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցում ուղարկելու միջոցով արձանագրված անհամապատասխանություն ները շտկելու վերաբերյալ ծանուցումն էլեկտրոնային եղանակով չի ուղարկվել «Նամենասեդ» ՍՊԸ-ին, այլ միայն ուղարկվել է անձանագրության պատճեն: Արձանագրության ուսումնասիրությունից պարզվել է, որ հանձնաժողովի կողմից չի նշվել, թե արձանագրված անհամապատասխանությունը քանի օրվա ընթացքում պետք է շտկել և որ էլեկտրոնային փոստի հասցեին է պետք այն ուղարկել»:

Հայտնում ենք, որ սույն ընթացակարգի փաստական հիմքերը միանգամայն համընկնում են նշված որոշումներում արձանագրված փաստական հանգամանքների հետ:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում սպանձնած պարտավորության որևէ խախտում, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որևէ շտկման ծանուցում չի ուղարկվել /միայն

արձանագրություն/, ուստի և առկա չեն «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն Բողոքներ քննողն անձին խնդրել է Մասնակցին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 19.11.2019թ.-ին սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ.

1. բավարարում է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին,

2. «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.12.2019թ.-ի նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 06.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի syruma@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Հանձնաժողովի 17.12.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցները՝ այդ թվում նաև «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ հավելված N 3.1:

Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3.1 հավելվածում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում առկա է «կամ համարժեք» բառերը, ինչպես նաև 45-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը սյունակում գրված է կազմակերպության անուն, իսկ 38-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը, արտադրողի անվանումը, ապրանքային նշանը լրացված չէ:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով սույն հրավերի 7.18 կետը՝ (առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը), որոշել է «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 17.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի syruma@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանություն-ները:

Հանձնաժողովի 27.12.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետուն չի շտկել արձանագրված անհամապա-տասխանությունները, որի արդյունքում հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարաման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում

ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած

մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն

կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (կողմից 19.11.2019թ.-ին սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 17.12.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցները՝ այդ թվում նաև «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ հավելված N 3.1: Սակայն՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3.1 հավելվածում առաջարկվող ապրանքների տեխնիական բնութագրում առկա է «կամ համարժեք» բառերը, ինչպես նաև 45-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը սյունակում գրված է

կազմակերպության անուն, իսկ 38-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը, արտադրողի անվանումը, ապրանքային նշանը լրացված չէ:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով սույն հրավերի 7.18 կետը՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 17.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի syruma@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 27.12.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետուն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որի արդյունքում հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 3.1 հավելվածում առաջարկվող ապրանքների տեխնիական բնութագրում առկա է «կամ համարժեք» բառերը, ինչպես նաև 45-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը սյունակում գրված է կազմակերպության անուն, իսկ 38-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը, արտադրողի անվանումը, ապրանքային նշանը լրացված չէ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին առաջարկել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Մասնակիցը վերը նշված չափաբաժինների մասով որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները չի շտկել, որի արդյուքում վերջինիս հայտը մերժվել է:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի կողմից թիվ 3.1 հավելվածով ներկայացված 45-րդ չափաբաժնի համար ծագման երկիրը սյունակում գրված է եղել կազմակերպության անուն, իսկ 38-րդ չափաբաժնի համար լրացված չի եղել ապրանքի ծագման երկիրը, արտադրողի անվանումը, ապրանքային նշանը լրացված, ինչը չի շտկվել Մասնակցի կողմից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ

հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/05 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**